ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03.06.2021թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2021թ. N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերով բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ Դավիթ Ստեփանյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, առողջապահության բաժնի պետ Լուսինե Վարդանյանի, սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ Գայանե Բոջուկյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Անի Ղազարյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Գասպարյանի և կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, կրթության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մեծ Պարնի համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան

Անուշ Խաչատրյան

Դավիթ Թամարյան

Դավիթ Ստեփանյան

Սամվել Խառատյան

Արման Մխիթարյան

Լուսինե Վարդանյան

Գայանե Բոջուկյան

Անի Ղազարյան

Անահիտ Բարոյան

Արմեն Գասպարյան

Համայնքի ղեկավար՝
Գագիկ Պալյան